ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

----- մայիսի 2011թ. N...-Ա

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՎԱՔՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԻՐԱԶԵԿՈՒՄՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՁԵՎԸ ԵՎ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հավաքների ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածին համապատասխան՝

Երևան քաղաքի ավագանին *որոշում է.*

1. Հաստատել.

1) Հանրային հավաքների անցկացման իրազեկումների գրանցամատյանի ձևը՝ համաձայն N1 հավելվածի։

2) Հանրային հավաքների անցկացման իրազեկումների գրանցամատյանի վարման կարգը՝ համաձայն N2 հավելվածի։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ N 1

Հաստատված է Երևանի ավագանու

«-----» ---------- 2011թ. N------- որոշմամբ

ՁԵՎ

ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՎԱՔՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԻՐԱԶԵԿՈՒՄՆԵՐԻ

N	Իրազեկման հեղինակի և հավաքի կազմակերպչի տվյալները	Իրազեկման օրը, ժամը	Հավաքի բնույթը և նպատակը	Հավաքի վայրը	Հավաքի օրը, սկիզբը և ավարտի մոտավոր ժամանակը	Մասնակիցների սպասվող թիվը	Լիազոր մարմնի որոշումը

Լ Ր Ա Ց Ո Ւ Ց Ի Չ Տ Ե Ղ Ե Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

ՀԱՎԵԼՎԱԾ N 2

Հաստատված է Երևանի ավագանու

«-----» ---------- 2011թ. N------- որոշմամբ

Կ Ա Ր Գ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՎԱՔՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԻՐԱԶԵԿՈՒՄՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՎԱՐՄԱՆ

1. Սույնով սահմանվում է Երևան քաղաքում հանրային հավաքներ անցկացնելու իրազեկումների գրանցամատյանի վարման կարգը:

2. Գրանցամատյանի պահպանումը և վարումն իրականացվում է Երևանի քաղաքապետի լիազորած անձի պատասխանատվությամբ:

3. Գրանցամատյանը տպագրվում է մեկ օրինակից, էջերը համարակալվում են ըստ հերթականության:

4. Գրանցամատյանը կարվում է և կնքվում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի կողմից:

5. Հանրային հավաքներ անցկացնելու մասին լիազոր մարմնին ներկայացված իրազեկումները գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ դրանք ստանալու հերթականության:

6. Հանրային հավաքների անցկացման իրազեկումների գրանցամատյանը ըստ սյունակների լրացվում է հետևյալ ձևով՝

1) 1-ին սյունակում թվերով գրառվում է իրազեկման մուտքագրման հերթական համարը.

2) 2-րդ սյունակում գրառվում է իրազեկման հեղինակի և հավաքի կազմակերպչի տվյալները (կազմակերպիչների անձնագրի կամ անձը հաստատող այլ փաստաթղթի տվյալները, հեռախոսահամարները, փոստային և էլեկտրոնային հասցեները).

3) 3-րդ սյունակում գրառվում է իրազեկման ներկայացման օրը, ժամը.

4) 4-րդ սյունակում գրառվում է հավաքի բնույթը և նպատակը (հանրահավաք, երթ).

5) 5-րդ սյունակում գրառվում է հավաքի վայրը.

6) 6-րդ սյունակում գրառվում է հավաքի օրը, սկիզբը և ավարտի մոտավոր ժամանակը.

7) 7-րդ սյունակում գրառվում է մասնակիցների սպասվող թիվը.

8) 8-րդ սյունակում գրառվում է լիազոր մարմնի որոշման վերաբերյալ տեղեկատվություն (որոշման ամսաթիվը, համարը)։

14. Լրացուցիչ տեղեկությունների համար նախատեսված տեղում գրառվում են հետևյալ տեղեկությունները՝ հավաքի անցկացման ժամանակ օգտագործվելիք առարկաները կամ տեխնիկական միջոցները, կարգադրիչների նախատեսվող թիվը, վարձակալությամբ տրված տարածքներում վարձակալի համաձայնությունը, իրավաբանական անձի կողմից հավաք կազմակերպվելու դեպքում՝ իրավաբանական անձի ղեկավար մարմնի կամ կառավարման մարմնի որոշումը և այլն։

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՎԱՔՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԻՐԱԶԵԿՈՒՄՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՁԵՎԸ ԵՎ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Հավաքների ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածով սահմանվում է, որ հանրային հավաքներ անցկացնելու մասին իրազեկումների գրանցամատյանի վարման կարգն ու ձևը հաստատում է համայնքի ավագանին։

Ելնելով վերոգրյալից Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում «Հանրային հավաքներ անցկացնելու մասին իրազեկումների գրանցամատյանի ձևը և վարման կարգը հաստատելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՎԱՔՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԻՐԱԶԵԿՈՒՄՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՁԵՎԸ ԵՎ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Հանրային հավաքներ անցկացնելու մասին իրազեկումների գրանցամատյանի ձևը և վարման կարգը հաստատելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՎԱՔՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԻՐԱԶԵԿՈՒՄՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՁԵՎԸ ԵՎ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Հանրային հավաքներ անցկացնելու մասին իրազեկումների գրանցամատյանի ձևը և վարման կարգը հաստատելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում եկամուտների և ծախսերի փոփոխություններ չեն առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ